

**Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն առարկայի
օլիմպիադա 2018թ.
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ
10-12 - րդ դասարան**

Տևողությունը՝ 120 րոպե:

Գնահատումը՝ 20 միավորանոց համակարգով:

Տեստային առաջադրանքի մեկ ճիշտ պատասխանը գնահատվում է 1 (մեկ) միավոր, իսկ գրավոր առաջադրանքի մեկ ճիշտ պատասխանը՝ 0.5 (կես) միավոր:

1. Հայրենական պատերազմին մասնակցում էին .

- ա) 600 հազար հայորդիներ v գ) 650 հազար հայորդիներ
- բ) 500 հազար հայորդիներ դ) 700 հազար հայորդիներ

2. Հայկական քանի՞ դիվիզիա է մասնակցել Հայրենական Մեծ պատերազմին (1941-1945թթ).

- ա) 5 գ) 6 v
- բ) 7 դ) 3

3. Առաջանշանառումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

- ա) $U = A_{\text{թ}} \times t_{\text{գ}}$ գ) $V_{\text{թ}} = U \times t_{\text{գ}}$
- բ) $U = V_{\text{թ}} \times T_{\text{գ}}$ դ) $U = V_{\text{թ}} \times t_{\text{գ}}$ v

4. Հակառակորդի ուժեղ կրակի ներքո աննկատ նրան մոտենալու կամ տեղանքի անհարթ ռելիեֆը և հակառակորդի կողմից դիտարկվող հատվածները գաղտնի հաղթահարելու համար կիրառվում է՝

- ա) Վազեվազքը գ) Սողանցումը v
- բ) Ծնկաչոք ծածուկ քայլքը դ) Գետնանցումը

5. Եթե ջոկը փոխում է հարձակման ուղղությունը, զինվորին խստիվ արգելվում է

- ա) Չփոխել իր տեղը ջոկի մարտակարգում գ) Շարունակել ենթարկվել փոփոխություններին
- բ) Փոխել իր տեղը ջոկի մարտակարգում v դ) Վերադասավորվել ըստ ջոկի մարտակարգի

6. Հակահատակային ականների քաշը կարող է լինել

- | | | | |
|--------------|-------------------------------------|--------------|--------------------------|
| ա) 2,7-10 կգ | <input checked="" type="checkbox"/> | գ) 2,5-10 կգ | <input type="checkbox"/> |
| բ) 2,7-9 կգ | <input type="checkbox"/> | դ) 3,5-10 կգ | <input type="checkbox"/> |

7. Վարակի ո՞ր խմբին է պատկանում տղային էնցեֆալիտը.

- | | | | |
|---------------|-------------------------------------|--------------|--------------------------|
| ա) Աղիքային | <input type="checkbox"/> | գ) Մաշկային | <input type="checkbox"/> |
| բ) Արյունային | <input checked="" type="checkbox"/> | դ) Շնչառական | <input type="checkbox"/> |

8. Վնասված վերջույթը վիրակապել այն դիրքում որում

- | | | | |
|--|-------------------------------------|--|--------------------------|
| ա) եղել է վիրակապումից առաջ: | <input type="checkbox"/> | գ) այն պետք է գտնվի վնասվողին տեղափոխելիս: | <input type="checkbox"/> |
| բ) այն պետք է գտնվի վիրակապումից հետո: | <input checked="" type="checkbox"/> | դ) վնասվողը հայտնվել է: | <input type="checkbox"/> |

9. Ինչպե՞ս է կոչվում թաքստոցի հետևում գտնվող գնդակից չխոցվող տարածությունը (թաքստոցի գազաթից մինչև հանդիպման կետը).

- | | | | |
|-----------------------------|-------------------------------------|--------------------------|--------------------------|
| ա) Պատասպարված տարածություն | <input checked="" type="checkbox"/> | գ) Մեռյալ տարածություն | <input type="checkbox"/> |
| բ) Պաշտպանված տարածություն | <input type="checkbox"/> | դ) Անխոցելի տարածություն | <input type="checkbox"/> |

10. Խստորեն արգելվում է

- | | | | |
|---|-------------------------------------|---|--------------------------|
| ա) մարդկանց վրա նշան բռնել: | <input type="checkbox"/> | գ) մարդկանց վրա պահել և փորձել քաշել ձգանը: | <input type="checkbox"/> |
| բ) մարդկանց վրա նշան բռնել և քաշել ձգանը: | <input checked="" type="checkbox"/> | դ) նշան բռնել և քաշել ձգանը: | <input type="checkbox"/> |

11. Հրետանավորը պայթյունը լսել է բռնկումից 9 վայրկյան հետո: Հեռավորությունը մինչև հարվածի տեղը հավասար կլինի՝

$$L = \frac{9}{3} \cdot 3 \text{ կմ}$$

12. Նշանակետի հեռավորության ճիշտ որոշումը հնարավորություն կտա

Կատարել անսխալ նշանառություն և նշանակետը խոցել առաջին կրակոցով:

13. Ուրն է կոչվում գնդակի հետագիծ:

Այն կոր գիծը, որն արտագծում է գնդակի ծանրության կենտրոնը օդում թռիչքի ժամանակ, կոչվում է հետագիծ:

14. Թվել գինվորական պատասխանատվության տեսակները:

- Կարգապահական,

- Վարչական,

- Քաղաքացիաիրավական,

- Նյութական,

- Քրեական:

15. Միջուկային զենքը՝

Պայթյունային գործողության զանգվածային ոչնչացման զենք է, որը հիմնված է շղթայական միջուկային ռեակցիաների ժամանակ անջատվող ներմիջուկային էներգիայի օգտագործման վրա:

16. Կալաշնիկովի 7,62 մմ ավտոմատով կրակում են կրծքային թիրախի վրա՝ 400 մ հեռավորությունից, ձախ կողմից փչող չափավոր քամու դեպքում, ապա քամու ճշգրտումը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta C_{\text{քամու}} = \frac{L}{2}$$

17. 5,45 մմ փամփուշտներով Կալաշնիկովի ավտոմատով կրակելիս ճշգրտումը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta C_{\text{քամու}} = \frac{L^2 - 2}{2}$$

18. Ինչի՞ համար են նախատեսված ճառագայթային հետախուզության չափիչ սարքերը:

Ճառագայթային չափիչ սարքերը նախատեսված են իոնացնող ճառագայթների դիտման և գրանցման համար:

19. Բաց ջրամբարների վարակման դեպքում

Դրանցից պետք է օգտվել միայն բժշկական թույլտվությունից հետո:

20. Ինչո՞վ է տարբերվում դիրեկցիոն անկյունը մագնիսական ազիմուտից:

Դիրեկցիոն անկյունը *կիրումետրային ցանցի ուղղահայաց գծի հյուսիսային ուղղության* և դեպի առարկան ուղղված գծով կազմված անկյունն է, իսկ մագնիսական ազիմուտը՝ *մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության* և (ժամացույցի սլաքի պտտման ուղղությամբ) մինչև նշանակետն ընկած հորիզոնական անկյունն է: